ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 41

«03» 04 2019 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 68 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և առանձին գործառույթների իրականացման համաչափ վերաբաշխում կատարելու նպատակով, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ կետի 5-րդ ենթակետով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ և 10-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքացուցակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի հունիսի 6-ի N 50 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 68 հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին բաժնի 5-րդ գլխի 5.1-րդ ենթագլխի 26-րդ կետի «Բաժնի գլխավոր մասնագետ 19» բառերը փոխարինել «Բաժնի գլխավոր մասնագետ 20» բառերով.

2) 1-ին բաժնի 5-րդ գլխի 5.1-րդ ենթագլխի 28-րդ կետի «Բաժնի առաջին կարգի մասնագետ 10» բառերը փոխարինել «Բաժնի առաջին կարգի մասնագետ 9» բառերով:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ